

## ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵՆԻԿԲ

### Սովորք հայկականը

Հայկական դպրութեանց ծաղկելուն զօրաւոր միջցներէն մշկն ալ նախնեաց ընտիր երկասիրութեանցը հրատարակութիւնն ըլլալուն ամենենին տարակոյս չունենալով, այս տարի սկսանք հայէական Սովորք անունով պղտի գրբոյկներ ընծայել Ազգերնուս և ուսումնասէր պատասնեաց . որովհետեւ գլխաւորաբար այս վերջիններուն կրթութեան և յառաջադիմութեան նպատակաւ եղած է հրատարակութիւնը : Ազգային գրբոյկներու մէջ որպատի ալ յայտնի կը տեսնենք թէ վարժապետք և բարերարք որպատի ջանք կ'ընեն հայրենի լեզուն ծաղկեցնելու համար, իրենց աշխատութեանցը պառուղ քաղող թէրևս շատ քիչերը դտնուին, երբոր անաշառ և անկողմնասէր ոգւով մտածութեան հայէլու ըլլան, երբոր գիտնան՝ թէ ճշմարիտ յառաջադիմութեան համար անպտուղ մեծախօսութիւններէն աւելի հաստատուն և յայտնի ապացուցները պէտք է դիտեն երբոր լաւ հասկրցած ըլլան վարժապետք թէ հայրենին տեղեկութիւն ըսելը խառնիխուռան շփոթ բառերու գիտութիւնը չէ, այլ ընտիր կամ գէթ ըստ կարի անդխալշարագրութիւնը, որն որ կարծէ մազգերնուս մէջ սակաւագիտաւ բան մը սեպէնիս ծանր չերենար բարեսիրաց՝ երբոր այս վերջի քանի մը ապառուսն մէջ ապագրած գրաբառ գրոց կամ հաստուածոց հմտաբար ակնարկէն : Ընտիր շարագրութիւն և հայկաբանութիւն սորվելուն կ'երաց՝ քերականութիւններէն և բառադիրքներէն աւելի, նախնեաց գըրքերուն մտադիւր վերծանութեամբը ըլլալուն վըրայ ոչ որ կը տարակուսի . վասն զի առաջնները թէ որ լեզուին կազմութեան կանոնները կը սորվեցնեն ու դժուարութիւնները կը բառնան, երկրորդը գործնական կրթութիւնն մը կը սեպուի և հետեւողութեան դաղլափար : Սակայն ասոր մէջ ալ գլխաւոր գիտելու բան մը այն է որ ամէն մեծ և կանգնաչափ բառերով յօրինուած գրոց չէն և շարագրութէան օրինակ ի՛ըլլայ ըսելը պատիւը չետանք . գիտնալով որ նոյն իսկ հինգերորդ ունեղէն դարու գրիչք իրենց մէջ մեծ տարբերութիւն ունին, որոնց մէկուն ընթերցմանը օգուտ կը քաղէ աշկերտը և միւսովը կը վնասուի :

Այս ամէն ճշմարիտ խորհրդածութիւնները աշքերնուս առջևն առնելով, սկսանք ընծայել հայկական Սովիերաց հատորները, և պիտի շարունակէնք . և յօյսերնիս մեծ է թէ գիտած վախճաններնուս ալ պիտի հասնինք . և գլխաւորապէս անոր համար որ ինչպէս առաջի հատորին յառաջաջարանութեան մէջ նշանակուած է, ինչուան հիմա թէպէտ շատ նախնեաց ընտիր գրութիւնքը կամ մարդմանութիւնք հրատարակուեցան, սակայն ազգերնուս կէս մը ալ զաքատութեան և կէս մ'ալ անուսումնութեան պատաժառաւաւը՝ անոնցմէշատը գրեթէ երեսի վրայ ձգուած են . որով ըրած օգուտնին ալ համեմատաբար նոււազ կ'ըլլայ . իսկ այս Սովիերը սակաւագին՝ որով և գիւրաստանալի ըլլալով, աւելի պաղաբերութեան յօյսեր կու տան

հայրենեաց յատ աջադիմութեան ցանկացող պըրաերու : Այսափ ընդհանուր խորհրդածութիւնն մը ընելին ետքը քանի մը հարկաւոր տեղեկութիւններ տանք մեր ընթերցասիրաց նոր հրատարակուած առաջի երկու հատորներուն վայ :

Ա. Բանտ Խըագու- նախնի իմաստակացն Յանաւագայ ։  
— Յունաց ազգը ինչպէս զանալոն գիտութեանց և արուեստից գայեակ և բարգաւաճող սեպուած է արժանապէս, առանկ ալ իմաստապիրութեամբը նախանձելի . և թէպէտ եղիպատացի և փիւնիկեցի գաղթականներէն իրեն առջի իմաստապիրական գիտութեանցը սկզբունքը սաացաւ, սակայն բոլոր հին աշխարհի օրէնք տուող՝ իր իմաստապէրըն եղան : Ասոնք անմիջապէս չոմերուսէ, զեսիոդէեայ և ուրիշ անոնց ժամանակակից քերթողներէն ետքը սկսան երևնալ ըլլագա, և գլխաւոր պարագերնին էր ժողովրդեան բարյոյական լաւութեանը վըրայ հակել : Այս վախճանին համենելու համար ուղղախոհ իմաստասէրներէն շատը նախ իրենց վարդովը ժողովրդեան օրինակ կ'ըլլային, երկրորդ՝ աշկերաններ ժողովելով և անոնց իրենց վարդապէտութեանցը սկզբունքը սորվեցնելով, և երբորդ՝ համառօտ և իրատական խօսքեր աւանդելով, որոնք ժողովրդեան շատ հաճոյ կ'անցնէին, և բերնէ բերան աւանդութեամբ իրենց մէջ կը զրուցուեին . ինչուան Անտոնինեանց ժամանակակից Ստորէոս յոյն մտտենագիր մը, Քրիստոսէ գրեթէ 180 տարի ետքը, այն առածները հաւաքեց ու առանձին գիրք մը ձեւացուց : Կ'երենայ թէ Ստորէոսի գիրքը կամ անոր համառօտ քաղուածը մեր երանաշնորհ Թարգմանիչնախնեաց ձեռքն ալ անցեր է, երբոր ուսումնատենչ փափաքանօք լցուած՝ ամէն պիտանի և օգտակար գրոց թարգմանութեան ետեւէ կ'ըլլային քաղքէ քաղաք Ճանապարհորդելով և շատ գրատուններ աշքէ անցընելով : Թարգմանչն վարպէտ և ընտիր շարագրութիւններ աւելի գեղեցկութիւնն մը տուեր է իմաստասիրաց վճռական խօսքերուն և իրատուց : Արոնցմէ ետքը գրուած է ուրիշ խորագրով մը խօս Սէիւնդուի իմաստակին ։ Աւրիւնաս յայր, որն որ ուրիշ անգամ ընծայեր ենք ընթերցուաց՝ օրագրիս առաջի տարբանին մէջ : Այս Սէկոնդոսը Ագրիփանոս կայսեր ժամանակակից ամենացի իմաստասէր մըն է, և միայն իր այս պատմութեամբը, և իմաստուն կէս մըն ալ իմաստակ խօսքերով ծանօթացած :

Բ. Սէրիոն Սահայա Պատմունիւն կարուց, Խըագու և թուղթի : Հայկական Սովիերաց երկրորդ հատորին մէջ մեր ազգային գրպութեանց նորոգիչ մեծին Սահակայ և իրեն ջանիցը ընկեր սրբոյն Մէսորով պատմութիւնն է . ետքը Ս. Սահակայ անուամբը հիմու հիմու մեր ձեռքը գտնուած սկզբանագրութիւնն էրի կամական վարուց պատմութիւնքը : Իրեն վարուցը պատմութիւնը չենք կրնար ըսել թէ ում ձեռքով գրուած ըլլայ . և գրութեան ոճը թէպէտ կ'ընալիր, բայց իր աշակերտացը ընծայել ալ գիւրած իրենայ . թէպէտ և ազգային պատմէաց խօսքերէն գիտենք թէ ինչպէս կ'որիւն սրբոյն Մէսորով պատմութիւնն էրի սակաւագիտ վարդապէտին երկրաց : Այս Սէկոնդոսը սակաւագիտին իրենց վարդապէտ կ'ըլլայ, ոչ միայն անոր համար որ կիրակոս պատմիչը նոյն բազ-

մարդիւն իմաստասէր վարդապետին ուրիշ գը-  
րուածները յիշելու ատեն կը զրոցէ թէ “Սա  
գրեաց ձառս ներբողականս ‘ի մեծազօր արքայն  
Հայոց Տրդատ, և ‘ի սուրբ Հայրապետն Ներսէս և  
‘ի պահնչելին Սահակ և Մեսրովակու : Որուն ալըլ  
լայ, այս յայտնի է որ ընտիր մատենագրութիւն  
մըն է, և աշխայժ հայրենասէր ոգով մը սրբոյն  
Սահակայ և Մեսրովակայ և Թարգմանչաց՝ ազգին  
համար կրած վիշտերը և իրենցմէ ընդունած ար-  
խուր փոխարէնը սրտաշարժ բանիւք կը ստորագրէ:

Այս պատմութենէս ետքը դրուած է Ս. Սա-  
հակայ Վաղարշապատու եկեղեցւոյն մէջ հանդի-  
պած տեսլեան նկարագիրը, որով սուրբ Հայրա-  
պետին ցըցուց Աստուած առաջուց մեր ազգին  
դիմուն գալիք փորձանքները, և Հայրապետական  
ու թագտորական աթուոց միանգամյն դադ-  
րից. զորն որ նոյն ինքն Ս. Սահակ արտասուզ  
պատմեց՝ ազգին կործանումը փութացընով անմիա-  
բան նախարարաց : Այս տեսիլքն արդէն ծանօթ  
է ընթերցողաց Փարագեցւոյն պատմագրութեամբը.  
սակայն մենք որովհետեւ առայժմ Փարագեցւոյն  
գրոց լաւ օրինակը ըռնիք, աւելի հետևեցանք  
բոլորագիր ընտիր և ուզիղ ձառընտիր մը, ուսկից  
առած ենք նաև Ս. Սահակայ պատմութիւնը :

Տեսիլքէն ետքը դրած ենք Ս. Սահակայ կանոն-  
ները : Հայկական նշանագրոց գանուելէն ու դրպ-  
րոցաց բարեկարգութենէն ետքը՝ սուրբն Սահակ  
Վաղարշապատու մէջ ազգային ժողովք մը ըրաւ,  
և եպիսկոպոսաց հաւանութեամբը այս շրջաբերա-  
կան թուղթը հրատարակեց աստուածիմասս իօս-  
քերով, և անոնց համեմատ հայկական ընտիր շա-  
րագրութեամբ : Ձեռուընիս եղած հինգ վեց կա-  
նոնդրոց բաղդատութեամբը եղած է այս շրջաբե-  
րականին տպագրութիւնը :

Կանոններէն ետքը կու գան սրբոյն Սահակայ  
անուամբը եղած թղթերը, որոնց ետքի իրեղը  
խորենացւոյն պատմագրութենէն առնուած են .  
իսկ առջի երկու թղթերը առ Պողկ Հայրապետ  
կոստանդնուպոլսի և առ Ակակ եպիսկոպոս Մել-  
տինոյ, բոլորագին նոր և առջի տպագրութիւնը կը  
տեսնեն, և մեր ազգային եկեղեցական պատմու-  
թեան ալնոր լոյս մը կրնան տալ: Որովհենաև Ս. Սա-  
հակայ հայրապետութենէն ետքը՝ անոր աշխերաներէն  
ոմանք թէոդորոս Մոպսուեստացւոյն գրքերը սկը-  
սան ասդիս անդին սփռել, ու ինչուան Հայաս-  
տանի մէջ ալ ցրուել Հայկական թարգմանու-  
թեամբ : Սուրբն Սահակ այն օստարալուր վարդա-  
պետութենէն իր ժողովուրդը անվասա պահելու  
համար, առանձին ժողով գումարել տուաւ Տա-  
րօնոյ Աշխատա քաղաքը, և թէոդորոսի գրքերը  
քննելով միաբանութեամբ նզովեցին զինքն ալ ի-  
րեն գրուածքներն ալ: Պատմութիւնը կ'աւանդէ  
թէ հոն Ս. Սահակ Քրիստոսի մարդեղութեան վը-  
րայ սքանչելի ճառ մը խոսեցաւ . ետքը իրեն եպիս-  
կոպոսաց հաւանութեամբը այս ուզիղ գաւանու-  
թեան թուղթը գրեցին առ Պողկ Հայրապետ, ու  
Ղեղնդեայ երիցու և Աքրահամթարգմանչաց հետ  
կոստանդնուպոլիսի խրկեցին : Ետք նոյն իմաստով  
ու գրեթէ նոյն խօսքերով ուրիշ թուղթ մ' ալ  
գրեցին առ Ակակ եպիսկոպոս Մելտինոյ :

Սոփերաց տպագրութեան սկզբնաւորելուն վը-  
րայ խօսելով արժան համարեցանք հոստեղս երկու

խուզ մը ըսել՝ մեր ինչուան հիմայ բռնած կերպին  
վրայ ’ի տպագրութեան գրոց նախնեաց . աւելի  
անոր համար որ կը տեսնենք ազգերնուս մէջ ոմանք  
քննութեան ելած, այս մեր ազգասիրական գոր-  
ծին մէջ զմեզ մեղադրելի, անհաւատարիմն ձեռն-  
երեց ցուցնելու : Գիտեն բարեսկրտ որ ինչուան  
հիմա Նախնեաց գրոց տպագրութիւնք գիմաւո-  
րաբար մեր տպարանէն ելած են, գրեթէ երե-  
սունը հինգ կամքառասուն հատոր՝ բան տարրուան  
միջոցի մէջ ազգին ընծայելով: Եւ որովհետեւ գիտ-  
մունքնիս ազգային գրահանութեան ծաղկին ե-  
ղած է, ամէն ջանք ու փոյթ ունեցեր ենք ազգ-  
ւազ, անհմուտ, տպէտ և ինչուան երբեմն ալ հա-  
կառակասէր գրչաց ակամյա և կամ կամաւ մացու-  
ցած գոփիսութիւններէն զգուշանալով ընարե-  
լագոյն և վայելու տպագրութեամբ ընծայել ազ-  
գերնոււս՝ իրեն թէ լեզուին և թէ գրականութեան  
պարծանք եղող երկասիրութիւնքը . և այս մեր  
հաւատարիմ զգուշութեան համար թէ երախ-  
տեաց յարդը ճանցող ազգայիններէն և թէ հնա-  
սէր արևելագէտ Եւրոպացիններէն մեծ գովու-  
թիւններ ունեցեր ենք բերնով և տպագրու-  
թեամբ: Բայց որովհետեւ ձեռագիր Ճեռագիրին գրողին  
հմտութեանը կաման հմտութեանը պատճառաւ,  
զարմանք չէ՝ մանաւանդ թէ ուրախալի ալ է որ օր  
օրուան վայ նորանոր ձեռագիրը գուրս ելլեն և  
իրարու հարազատութիւնը կամ անհարազատու-  
թիւնը ցուցնին . և անսնցմով գրչագրողը կ'ըսայ  
գովելի կամպարսաւելի և ոչ երեկը տպագրողը:  
Ուստի և ըստ մեր կարծեաց, աս և ասոր նման  
գատաստանները անպատճառ ու թերես տգիտու-  
թենէ առաջ եկած մեղագրութիւն մը սեպելով  
ասկից աւելի չենք ուզեր այս նիւթի վրայ իօս-  
քերնիս երկնցնել: Միայն չեմք կրնար ուրիշ նը-  
ման առթի մը մէջ յիշած խօսքերնիս չիրկնել թէ  
“ Ազգիս գպրութե ախործակը հիմայ բացուելու  
վրայ է . բայց թէ որ մէկէն իր գեռ տկար քայլե-  
րուն օգնական ցուպը թղզու, ու գատողական գա-  
ւազնը ձեռք առնէ, բաներնիս գէշ է . , : Վասն վի  
գրագատութել՝ որչափ օգտակար՝ այնչափ ալդ ժուա-  
րին ըլքալուն, շատ զգուշափի և մանաւանդ այնպիսի  
նիւթերու վրայ աեղեկուի չունեցողի մը համար :

Սոփերաց մասերս հրատարակելի հատորներն են  
Գ. — Յովհաննու Սարկաւագ վարդապետի ՎԱՅՆ  
ՔԱՅՆԱՑՈՒԹԵԱՆ ընտիր հաւատ:

Դ. — Ե. Յովհ. Յսկերերանի. Գրիգորի Սարկաւա-  
գապետի, Յովհ. Սարկաւագ վարդապետի, Յովհ.  
Վարդապետի և Եղինացւոյններողական ճառերը  
ի պատիւ սրբոյ հօն մերոյ ԳՐԻԳՈՐԻ ԼՐԱՄԱՆՈՒ-  
ՇԻ, երկու փոքրագիր հատորի մէջ ամփոփուած:

Զ. — Մերորագայ Երիցու անուամբը յիշատա-  
կուած ՄԵԾԻՆ Կ. ԵՐՍԵԽԱ պատմութիւնը, ըստ  
ընտիր և հնագոյն ձեռագրաց :

Է. — ՄԵՐՈՒԵՐՈՒ ՍԱԴԻԿՈՒՑ և ՄԵԾԻՆ ՎԱՐԴԱ-  
ՆԱՅ գատուր ՀՈՒԵՑԱՆԱ պատմութիւնները, հին  
շարագրուք ընտիր և սրտաշարժ կարգաբանուք:

Բ. — ՎԱՀԱՆԱՑ ԳՈՎԻ. ԹԻՆԵՑՈՒ և ՄԵԾԱԿԱՑ ՀԱ-  
ՄԱՆ ՄԱՆ ՎԱՀԱՆԱՑ ՎԱՀԱՆԱՑ ՎԱՀԱՆԱՑ ՎԱՀԱ-  
ՆԱՑ ՎԱՀԱՆԱՑ ՎԱՀԱՆԱՑ ՎԱՀԱՆԱՑ ՎԱՀԱՆԱՑ ՎԱՀԱ-